ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/24, 20.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԳՄԴ-ԳՀԱՊՁԲ 2019/02» ծածկագրով գնանշման հարցում, Սննդամթերքի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոխել 30.01.2019թ. հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետը՝ «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ և հնարավորություն տալ սահմանված կարգով «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ին շտկելու հայտում առկա պատճենների քանակի վերաբերյալ անհամապատասխանությունը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոք քննող անձին

Բողոք բերող	<<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ (հասցե, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճ 6, ինդեքս, 3801)
Ներկայացուցիչ	Ավագյան Սուրեն Համլետի (հաշվառման հասցե, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Երկրաբանների փ. 11 ՆՔ 005766423 տրվ. 020-ի կողմից, 03.03.2017թ.) <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ տնօրեն, 098661129 ph support@mail.ru
Պատվիրատու	Վայոց Ձոր մարզի <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ (հաշվառման հասցեն Վայոց Ձորի մարզ, գ. Գետափ Եղեգնաձորյան խ.1)
Գնման ընթացակարգի առարկան և ծածկագիրը	<<ԳՄԴ-ԳՀԱ ՊՁԲ 2019/02>> ծածկագրով <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին անհրաժեշտ սննդամթերքի մատակարարում

ԲՈՂՈՔ

1. <u>ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՓԱՍՏԵՐԸ</u>

Բողոքաբերը ի թիվս այլ մասնակիցների , մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված թիվ <<ԳՄԴ-ԳՀԱ ՊՁԲ 2019/02>> ծածկագրով գնանշման ձևով սննդամթերքի մատակարարման գնման ընթացակարգին (այսուհետ Ընթացակարգ): 30 հունվարի 2019թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը, հայտարարել է բոլոր մասանկիցների կողմից ներկայացված գնային առաջարկները , այդ թվում նաև <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ –ի գնային առաջարկը, այնուհետև հանձնաժողովը մերժել է <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ -ի հայտը:

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ N 7064-18
4 «22» 02 2019 թ.

2. ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Որպես հայտի մերժման փաստական հանգամանք, արձանագրության մեջ նշված է՝ մեջբերում. *<<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հրավերով սահմանված պահանջներին /1 բնօրինակ, 2 պատճեն/: Համաձայն Գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 4.3 կետի, հանձնաժողովը հայտը մերժեց/>>*:

Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ) և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներով: Մասնավորապես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Կարգի 41-րդ կետում նշվում է , որ Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 30 հունվարի 2019թ. թիվ 2 արձանագրությամբ <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ-ի գնման հայտը անհիմն է մերժվել՝ չի տրվել անհամապատասխանությունը շտկելու Կարգով սահմանված հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, և ղեկավարվելով Օրենքի 46-ից 48 –րդ , և 50-րդ հոդվածի դրույթներով

Խնդրում եմ բողոքը բավարարել,

այն է

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոխել 30 հունվարի 2019թ. հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետը <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ –ի հայտը մերժելու վերաբերյալ, և հնարավորություն տալ, սահմանված Կարգով <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ –ին շտկելու հայտում առկա պատճենների քանակի վերաբերյալ անհամապատասխանությունը:

Բողոքը բավարարվելու դեպքում, խնդրում եմ Բողոքաբերի կողմից նախապես վճարված 30000 ՀՀ դրամ բողոքարկման վճարը հետ փոխանցել ԱԳԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ <<Վայք մասնաճյուղ>> <<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ –ի թիվ 220443330232000 հաշվեհամարին

Կից ներկայացնում եմ

1. Բողոքարկման վճարի անդորրագիրը
2. Բողոքարերի իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը
3. <<ԳՄԴ-ԳՀԱ ՊՁԲ 2019/02>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի 2 արձանագրության պատճենը:

Բողոք բերողի ներկայացուցիչ

<<Լիդեր Կոմպլեքս>> ՍՊԸ տնօրեն Սերգեն Համլետի Ավագյան

«ԼԻԴԵՐ ԿՈՄՊԼԵՔՍ» "LIDER COMPLEX" 09101077

19 փետրվարի 2019թ.